1875

73

232·9
U-43

1898

ՍԷՐ ԱՌ ՔՐԻՍՏՈՍ

73

معارف عمومیه نظارت جلیله‌سنك ۲۹ ذی‌الحجه ۳۱۵ و ۹ مایس
۳۱٤ تاریخلی و ۲۰٤ نومرولی رخصتنامه‌سیله نشر اولنمشدر

مصارفی آمریقان مسیونر شرکتی طرفندن تسویه اولنه‌رق طبع اولنمشدر

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈԲ ՊՕՅԱՃԵԱՆ

1898

232.9
U-43

2010

2329
Ա-43

ՍԷՐ ԱՌ ՔՐԻՍՏՈՍ

معارف عمومیه نظارت جلیله‌سنك ۲۹ ذی‌الحجه ۳۱۵ و ۹ مایس
۳۱٤ تاریخلی و ۲۰٤ نومرولی رخصتنامه‌سیله نشر اولنمشدر

مصارف آمریقان مسیونر شرکتی طرفندن تسویه اولنه‌رق طبع اولنمشدر

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈԲ ՊՕՅԱՃԵԱՆ
1898

2001

39353-67

ՍԷՐ ԱՌ ՔՐԻՍՏՈՍ

Կ'ուզեմ քիչ մը խօսիլ ձեզ Պետրոսի առաջին թղթոյն առաջին գլխոյն ութերորդ համարին առաջին մասին մէջ գտնուած սա բառերուն վրայ. «Ան որ դուք չտեսած՝ կը սիրէք,» այսինքն՝ զՅիսուս, վասն զի նախընթաց բառերն են «Յիսուս Քրիստոսի յայտնուելու ատենը։»

Սէր առ Քրիստոս. ահա մեր նիւթը։

Գիտէք թէ Պետրոս գրեց այս թուղթը այնպիսի անձանց որ ցրուեալ էին ի Պոնտոս, Գաղատիա, Կապադովկիա, Ասիա և Բիւթանիա։ Որոշ չենք գիտեր թէ ուստի՛ գրուեցաւ այս թուղթը։ Պետրոս կը յիշէ զԲաբելոն իբրև քաղաքն ուստի իւր շուրջ գտնուած անձինք ղրկեցին բարևներ. և շատեր կը կարծեն թէ այս թուղթը գրուեցաւ ի Բաբելոն, աշխարհի հռչակաւոր վաղեմի քաղաքն Եփրատի ափանց վրայ։ Սակայն ուրիշներ կը կարծեն, և թերևս նոյնքան հաւանականութեամբ, թէ Պետրոս կը գործածէ Բաբելոն բառը մասնաւոր առմամբ իբրև նշանակ Հռոմայ քաղաքին, որ, նման վաղեմի մեծ Բաբելոնի, աշխարհի ոստանն էր, ուր ի միասին կը գտնուէին զանազան լեզուք, կրօններ և ցեղեր։

52640-Ա.Հ.

Ինչպէս դուք, եթէ գտնուէիք ի Հռոմ, ձեր նամակին գլուխը կրնայիք գրել «Յաւիտենական քաղաք,» վասն զի շատ անգամ այդպէս կը կոչուի այն, կամ եթէ գտնուէիք ի Ֆլորանս, կրնայիք գրել «Ծաղկանց քաղաք,» վասն զի այդու կը հասկցուի այն քաղաքը, կամ եթէ գրէիք Ամերիկայի Ուաշինկթըն քաղաքէն, կրնայիք դնել ձեր նամակին գլուխը «Մայրաքաղաք Միացեալ Նահանգաց.» Նոյնպէս կարելի է թէ առաքեալն գրեց այս նամակն Հռոմէ և կոչեց զՀռոմ «Բաբելոն,» վասն զի իւր օրով կը ներկայացուներ զհինն Բաբելոն: Սակայն ի՛նչ քաղաքէ ալ գրուած ըլլայ այս թուղթը, գիտենք թէ որո՛ց գրուեցաւ:

Գրուեցաւ իբր երեսուն տարի յետոյ քան Տեառն մերոյ մահը, գրուեցաւ Քրիստոսի հետևողներու որ ցրուած էին արևմտեան Ասիոյ մէջ. երբեք չէին տեսած զՏէրն, և սակայն ըստ բանի Պետրոսի կը սիրէին զնա: Ահա այս կէտին վրայ կ'ուզեմ քիչ մը խօսիլ ձեզ:

Երբ փոքրիկ տղայ էի, միշտ կ'ըսէին ինձ որ սիրեմ զԱստուած. օրէնք և կանոն էր այդ: Տարակոյս չունէի թէ ուղիղ կանոն էր, բայց չէի գիտեր թէ ի՛նչպէս պարտէի պահել զայն, վասն զի երբեք տեսած չէի զԱստուած: Նա կը թուէր ինձ հեռաւոր և անհուն, և այնչափ մեծ՝ որ կը խորհէի թէ պի-

տի չզիջանէր խորհիլ իմ վրաս կամ կարեւորութիւն տալ ինձ: Կ'ըսէին ինձ թէ կը տեսնեմ զնա արևուն լուսոյն մէջ, բայց չէի կրնար սիրել արևուն լոյսը. թէ կը տեսնեմ զնա անձրևին մէջ, բայց չէի կրնար սիրել անձրևը. թէ կը տեսնեմ զնա որոտման եւ փայլատակման մէջ և գիշերուան աստղերուն մէջ, սակայն միշտ կը մտածէի թէ նա հեռի է ինծմէ: Չէի գիտեր թէ ի՛նչպէս պիտի յաջողէի, այսինքն՝ սրտիս մէջ ունենայի սէր առ Աստուած, սէր՝ զոր, կ'ըսէին ինձ թէ, անհրաժեշտ էր ունենալ: Ցանկարժական լոյս մը, և մեծ լոյս մը, ստացայ երբ ըսին ինձ թէ Քրիստոս կը յայտնէ ինձ զԱստուած և թէ ես պարտիմ սիրել զԱստուած ոչ միայն ինչպէս կը յայտնուի նա Բնութեան մէջ, ոչ միայն ինչպէս կը յայտնուի նա հոգւոյն մէջ, այլ և ինչպէս կը յայտնուի Քրիստոսով, որ է ստուգիւ բովանդակ սիրոյս արժանի էակ: Այս լուսաւորեց զիս մեծապէս: Եւ սակայն չէի գիտեր սիրել զՔրիստոս: Կը թուէր ինձ թէ նա էր վարդապետութիւն մանաւանդ քան անձնաւոր էակ մը, թէ նա էր նկարագրի և վարուց մասնաւոր օրէնք մը ներկայացուցող պարտականութեան կանոն մանաւանդ քան անձ մը զոր կարելի է ինձ ճանչնալ: Կը թուէր ինձ թէ նա էր անձ մը որ գոնէ մեռած գացած էր աշխարհէս, անձ մը որոյ կենսագրութիւնն էր իմ առջևս՝ չորս առան-

ձին պատմութիւններու մէջ, անձ մը որոյ վրայ կրնայի աքանչանալ, զոր կրնայի պատուել, և զոր սակայն չէի կրնար սիրել իբրև բարեկամ մը որ ներկայ է այս աշխարհի մէջ։ Գիտէի թէ սէրն ի՛նչ կը նշանակէ, ինչպէս ձեր մէջ ամէն ոք գիտէ, այսինքն՝ բարեկամի մը համար սրտին մէջ վառուած այն եռանդը, որով կը տաքնայ սիրտը և կը զուարթանայ հոգին։ Խանդաղատանք է այն առ բարեկամն, նման այն գորովոյն զոր կը զգանք առ մայր, առ հայր, առ քոյր և առ բարեկամն։

Արդ, թէ ի՛նչպէս կրնայի ունենալ այդ սէրն առ Քրիստոս, առ այն էակն որոյ վերաբերեալ պատմութիւնները միայն, այսինքն՝ Աւետարանաց մէջ տեսնուած կենսագրութիւնը, ունէի իմ առջևս, դժուարին և շուարեցուցող խնդիր էր ինձ համար։ Ըսին ինձ թէ յայդմ մասին պարտիմ ապաւինիլ աստուածային շնորհաց օգնութեան. և այդ խրատը ճշմարիտ դտայ։ Ըսին թէ պարտիմ աղօթիւք խնդրել Աստուծոյ շնորհքը և օգնութիւնը որպէս զի կարող ըլլամ ունենալ Քրիստոսի սէրը. այդ ևս ճշմարիտ էր։ Այսու ամենայնիւ, դժուարին էր ինձ հասկնալ թէ ի՛նչպէս պիտի տածէի սրտիս մէջ այսպիսի սէր առ նա որ ի վաղուց հետէ աներևութացած էր աշխարհէս։ Բաւական ժամանակ յետոյ սկսայ հասկնալ ինչ որ դուք այժմ կը

սորվիք աւելի կանուխ թէ Քրիստոս չէ մեռեալ, թէ նա է յարուցեալ, յերկինս համբարձեալ և յաւիտեան կենդանի է իբրև Բարեխօս մարդկան, այսինքն՝ իբրև Փրկիչ և Թագաւոր։ Սորվեցայ նմանապէս ինչ որ դուք կը սորվիք այժմ թէ Քրիստոս հեռի չէ մենէ, այլ ներկայ է մեզ, անտեսանելի, բայց իրօք ներկայ. ներկայ՝ տրտմութեան ամէն տեսարանի մէջ, ներկայ՝ ուրախութեան ամէն տեսարանի մէջ, ուր իր աշակերտք կը հաւաքուին և փառք կը մատուցանեն անոր անուան։ Սորվեցայ թէ որպէս զի սիրեմ զնա՝ պարտիմ ընել զնա յատուկ խորհրդածութեան առարկայ. ուրիշ խօսքով, պարտիմ խորհիլ անոր վրայ։ Պարտիմ մտացս առջև բերել զնա, ինչպէս դուք սէր կը տածէք առ ձեր բարեկամն կամ բարեկամուհին, միշտ անոր վրայ խորհելով կամ մտածելով։ Եթէ հեռի է նա ձեր տեսութենէն, կը խորհիք անոր վրայ, և թերևս կը թղթակցիք անոր հետ։ Նոյնպէս մենք պարտիմք խորհիլ Քրիստոսի վրայ, որ ներկայացուած է մեզ Աւետարանաց միջոցաւ, խորհիլ՝ որպէս զի արժարժի և նորոգուի մեր սէրն առ նա։

Զարմանալի է Քրիստոսի վերաբերեալ նկարագրութիւնը զոր կը գտնենք Աւետարանաց մէջ։ Չորս Աւետարաններ կան, և թերևս խորհիք երբեմն թէ այս Աւետարանք աւելի են քան զոր հարկ են մեզ։ Ասոնք կը ներ-

կայացուներն մեզ զՔրիստոս ոչ մի տեսարա-
նի մէջ միայն, այլ՝ բազում տեսարանաց մէջ.
կը ցուցնեն անոր զարմանալի և հրաշալի գոր-
ծերը, նաև անոր յետին խոնարհութեան
գործերը։ Արդ, նայինք թէ ի՛նչ էր այս գա-
նազան պատկերաց պատճառը։ Եթէ խնդրէք
դուք նկարչէ մը որ հանէ ձեր բարեկամին
պատկերը, կամ եթէ ձեր հայրը կամ մայրը
խնդրէ նկարչէն որ հանէ ձեր կենդանագիրը
կտաւի վրայ, այսինքն՝ ողորկ մակերևութի
վրայ, նկարիչը կը խնդրէ մի լուսանկար մի-
այն և ոչ այլ ինչ. և ապա, եթէ բացակայ
էք, կ'առնու լուսանկարը և կ'ընդօրինակէ
զայն։ Թերևս յետոյ տեսնէ զձեզ, և տես-
նելով զձեզ՝ վրձինի նոր հարուածով կեն-
դանութեան դրոշմ տայ կենդանագրին։ Սա-
կայն ինչ որ կը պահանջէ երօք՝ ուրիշ բան
չէ, բայց լոկ մի լուսանկար։ Բայց դիցուք
թէ արձան մը կը պահանջուի փոխանակ
պատկերի որ կը շինուի հարթ մակերևութի
վրայ, արձան մը՝ որուն պիտի նայուի ամէն
կողմէ։ Քանդակագործն յայնժամ կը խնդրէ
պատկեր մը որ ներկայացունէ որոշեալ ան-
ձին երևոյթը, երբ նա կը դիտուի առջևի
կողմէն. կը խնդրէ ուրիշ երկու պատկերներ
որ ներկայացունեն նոյն անձին երևոյթը, երբ
նա կը դիտուի աջ կողմէն և ձախ կողմէն.
դարձեալ կը խնդրէ ուրիշ պատկեր մը որով
ներկայացուի այն անձին գլխոյն ետևի կող-

ման երևոյթը. կը խնդրէ պատկերներ ա-
մէն կարելի անկիւնէ առնուած։ Կը խնդրէ
հարիւր պատկեր փոխանակ միոյն զոր կը
խնդրէ նկարիչը. վասն զի պիտի յօրինէ ար-
ձան մը որ այնուհետև ամենուն պիտի ներ-
կայացունէ ճշդիւ այս անուն անձը, իւր
կերպարանին և դիմաց բովանդակ վեհու-
թեամբ, կենդանութեամբ, անուշութեամբ և
բոլոր յատկութեամբք։ Այո, կը կարօտի հա-
րիւր լուսանկարի։

Բարի։ Արդ, Քրիստոս պիտի ներկայացուի
մեզ. պիտի ներկայացուի ո՛չ հարթ մակե-
րևութի վրայ՝ միակ լուսանկարէ մը ընդօրի-
նակուելով, այլ, ինչպէս կը պատկերանայ մեր
մտաց առջև, տեսութեան ամէն կարելի ան-
կիւնէ դիտուելով։ Կ'ուզէք տեսնել թէ ա-
նոր ի՛նչպէս կը նայէր Փարիսեցին, ի՛նչպէս՝
Սադուկեցին, ի՛նչպէս՝ Հերովդեսեանը. ի՛նչ-
պէս կը նայէին Պիղատոս, զինուորք, Բե-
թանիացի Մարիամ, Փիւնիկ Ասորի կինը,
Յովհաննէս, Յակոբոս, Պետրոս և բոլոր այլք,
և ի՛նչպէս կը նայէին փոքր մանկունք։ Կ'ուզէք
տեսնել զՔրիստոս իւր բովանդակ կերպարա-
նով և իւր բազմազան գործերով զորս կա-
տարած է։ Ահա այդ է զոր ինչ կ'ընեն Ա-
ւետարանք։ Աւետարաններէն ոչ մին առան-
ձին կրնար այսպէս ներկայացունել մեզ զՔրիս-
տոս, բայց միանալով կ'ամբողջացունեն Քրիս-
տոսի նկարագրութիւնը, այնպէս որ նա է աշ-

խարհի համար աւելի իրական մի անձ և աւելի գեղեցիկ մի զօրութիւն քան որ և իցէ էակ զոր երբեք տեսած է աշխարհ։ Այս պատճառաւ պարտիք խորհիլ անոր վրայ որպէս զի սիրէք զնա։

Հարկաւ կը խորհիք դուք անոր զօրութեան վրայ որով գործեց հրաշներ, որով երկրէս վերացաւ իւր Այլակերպութեան ժամանակ, որով խորտակեց գերեզմանին դռները և մտաւ յերկինս։ Սակայն կ'ըսէք թէ չէք կրնար սիրել զօրութիւնը, լոկ զօրութիւնը։ Իրաւունք ունիք. չէք կրնար սիրել զօրութիւնը լոկ իբրև զօրութիւն։ Եթէ ոչ՝ պիտի սիրէիք նաև թընդանօթը որ ութ մղոն հեռի կ'արձակէ իւր գնդակը կամ ռումբն օդին մէջէն. պիտի սիրէիք Նիակարա ջրվէժը որ ամէն վայրկեան հազարաւոր և բիւրաւոր տակառաչափ ջուր կը թափէ անդունդը. պիտի սիրէիք չանթը որ յերկիր կը տապալէ ծառերը և կը փշրէ և կը լափէ զայնս նոյն հետայն։ Ոչ, չէք կրնար սիրել լոկ զօրութիւնը, և չէք կրնար սիրել զՔրիստոս, եթէ կը խորհիք գլխաւորապէս կամ առաւելապէս անոր զօրութեան վրայ։ ԶԱստուած սիրելու դժուարութիւնը զոր կը կրեն տղայք մինչև տեսնեն զնա ի Քրիստոս՝ սա է որ անոնց կը թուի նա իբրև հզօր, բարձրեալ, ամենիշխան և յաւիտենական էակ։ Եթէ տղայք կարող ըլլան խորհիլ Աստուծոյ վրայ ինչպէս յայտնուած է նա ի

Քրիստոս, յայնժամ կարող կ'ըլլան սիրել զնա, վասն զի կը միացուցեն զօրութեան, փառաց և գերիշխանութեան այս գաղափարաց հետ Քրիստոսի վերաբերեալ ուրիշ գաղափարներ ևս որք են ճշմարիտ գաղափարներ։

Առնունք, զոր օրինակ, Քրիստոսի քաղցրութիւնը։ Տղայք կը սիրեն մօր կամ բարեկամի քաղցր բարքը, կը սիրեն մօր կամ հօր դգուանաց քաղցրութիւնը, կը սիրեն մօր կամ հօր խօսքերուն քաղցրութիւնը։ Խիստ խօսքը, յանկարծ կամ բարկութեամբ ըսուած խօսքը, սոսկում կ'ազդէ տղայոց։ Քաղցրութիւնն կամ աղնուութիւնն հրապուրիչ է, և երբ կ'ըսենք աղնիւ կամ աղնուական, չենք ուզեր ըսել լոկ բարուք և վարուք կիրթ և փափուկ, այսինքն՝ աղնուաբարոյ անձ։ Աղնուական ի սկզբան կը նշանակէր աղնուատոհմ, և որովհետև աղնուատոհմ, ուստի և փափկասիրտ և աղնուահոգի։ Ահաւասիկ աղնուական բառին նշանակութիւնը։ Քաղցրութիւնը սիրելի և ցանկալի է մեզ երբ միացեալ է զօրութեան հետ. և որ աւելին է, որչափ մեծ ըլլայ զօրութիւնը, նոյնչափ անոյշ և հրապուրիչ կ'ըլլայ քաղցրութիւնը։ Արդ, Քրիստոս, որպէս կը պատկերանայ մեզ Աւետարանաց մէջ, չունի աւելի սիրուն և աւելի որոշ մի յատկութիւն քան այս յատկութիւնն քաղցրութեան։

Զայս ցուցնեմ ձեզ երեք դէպք յիշելով։ Նա տուաւ Օրէնք մը բոլոր աշխարհի, և աշխարհի պատմութեան բոլոր դարուց համար։ Արդ, ի՞նչպէս տուաւ զայն։ Քրիստոսի օրով, եթէ օրէնդիր մը մարդոց տար վարուց որ և է կանոն, բեմի վրայ կանգնելով կը խօսէր բարձրաձայն և բաղում շարժումներով, և այդպէս կը ջանար տպաւորել օրէնքը բոլոր ունկնդիրներուն մտաց վրայ։ Քրիստոս նստաւ. նստաւ լերան մը գլուխը, մինչ իւր շուրջ բազմութիւնք խռնեալ էին լերան խոտաւէտ կողերուն վրայ. և խօսեցաւ այնպիսի քաղցրութեամբ որով ձեր մայրերն կը խօսին ձեզ երբ տան ձեզ որ և իցէ խրատ կամ քաջալերութիւն։ Խօսեցաւ առանց բուռն շարժմանց, առանց լեզուի խստութեան. խօսեցաւ այնպիսի կերպով որոյ քաղցրութիւնն կը հաւասարի իւր իշխանութեան։ Եւ աշխարհի վրայ ամենայն ուրեք ուր կարդացած են մարդիկ այդ Օրէնքը և ըսած են, «Այո, այդ է բարձրագոյն Օրէնքը,» ըսած են միանգամայն, եթէ խոհեմ մարդիկ էին, «Որպիսի՞ մեղմութեամբ խօսուած է այն։» Այո, այնպիսի մեղմութեամբ՝ որով լոյսն կու գայ յերկնից, այնպիսի մեղմութեամբ՝ որով ցօղը կ'իյնայ խոտոց վրայ գարնան կամ ամրան մէջ, այնպիսի մեղմութեամբ՝ որով գունաւոր ամպն հեզիկ կը սահի օդոյն մէջէն։ Անոր մեղմ հոգին կը փայլի իւր պատուէրին մէջ։

Առնունք ուրիշ դէպք մը յորում նա կ'երևի փոթորկի մէջ, կը քալէ ալեաց վրայէն և կը նուաճէ զայնս՝ հարթ մակարդակի վերածելով։ Հանդարտ է. կը քալէ այնպէս մեղմով որպէս թէ շարժէր Ղազարոսի տան մէջ ի Բեթանիա. և փոթորկին այն ահեղ աղմուկին մէջ մեղմիկ ձայնով կ'ըսէ ջուրերուն, «Խաղաղութիւն,» և աշակերտաց՝ «Ես եմ, մի վախնաք։» Կը յիշէք դուք անոր յարութեան յոյժ նշանաւոր եղելութիւնը, երբ մեծ երկրաշարժ եղաւ, կ'ըսէ մեզ պատմութիւնը, և զինուորք զարհուրելով ինկան որպէս մեռեալ։ Հրեշտակն յերկնից իջաւ կատարեալ սպառազինութեամբ և շքեղութեամբ, և աշակերտք որ եկան ի գերեզման՝ բաց դռնէն նայեցան գերեզմանին մէջ և տեսան կտաւները որ հոն կը կենային. և անոր գլխոյն վարշամակը չէր միւս կտաւներուն քով, այլ՝ խնամով ծալուած և դրուած էր առանձին տեղ մը։ Ահա աշխարհի այս Տէրն և Թագաւորն այնքան ազնիւ և փափկանկատ էր որքան ամենասիրուն կիներն յաշխարհի, և չկամեցաւ մեկնիլ գերեզմանէն՝ թողլով վարշամակն հոն անկարգ և անկանոն վիճակի մէջ։ Ահա Քրիստոսի ազնուութիւնը. անոր բոլոր զօրութիւնը միացեալ էր այս խանդակաթ քաղցրութեան հետ։

Այժմ խորհինք անոր հոգւոյն կատարեալ մաքրութեան վրայ։ Դուք կը փնտռէք հոգւոյ

մաքրութիւն բոլոր այն անձանց վրայ որոց կը վստահիք և զորս կը սիրէք։ Կը զգուիք պիղծ բերանէ և մոլեկան բնաւորութենէ. տարակոյս չունիմ թէ կը զգուիք։ Ամէն ուղղամիտ տղայ կը զգուի, և դուք կը փնտռէք մաքրութիւն ձեր հօր, մօր և բարեկամաց վրայ։ Կը փնտռէք զայն ձեր վրայ ևս. կ'ուզեմ ըսել մաքրութիւն հոգւոյ և մաքրութիւն լեզուի։ Այս ցանկալի է ձեզ, և այս յատկութեան փայլը կը տեսնէք վտակին վրայ որոյ վճիտ ջուրը կը հոսէ խոխոջելով։ Բաղդատեցէք զայդ այն ինչ հեռակայ ըճին հետ որոյ ջուրն է կայուն, նեխեալ և աղտեղութեամբ լի, և որ կը բուրէ ապականիչ ժահահոտութիւն. պիտի գոչէք, "Որքան տարբեր է այդ ապականեալ լիճն այս մաքուր և կարկաջահոս վտակէն։" Այո. կը համարիք մարդարիտն աւելի ընտիր քան թանձր գիծերով և յոյժ պայծառ գոյներով պատկեր մը։ Կ'ընտրէք մանաւանդ մարդարտին մաքրութիւնը և փայլը քան ակնախտիղ գոյներու տարապայման ճոխութիւնը։ Կ'ընտրէք մաքուր օդն, որոյ կենսաբաշխ ազդեցութիւնը կը զգայ իւրաքանչիւր զարկ։ Կ'ընտրէք զայն մանաւանդ քան ապականեալ օդը որ լի է գարշահոտութեամբ և վտանգաւոր ազդեցութիւններով։ Ապա ուրեմն ես այնպէս կը համարիմ թէ կ'ընտրէք նաև մաքրութիւն հոգւոյ և լեզուի։ Այս արդարև կատարեալ էր ի Քրիստոս, և այս աւելի

արժանի է մեր դիտողութեան, վասն զի միացեալ էր անհուն և անչափելի զօրութեան հետ։ Զօրութիւնն յարմարութիւն ունի յերկնաւոր բերել մարդոց նկարագրին ստորնագոյն և յոռեգոյն կողմերը։ Տեսուած են շատ մարդիկ որք, եթէ ցմահ վարէին հասարակ կենցաղ, յարգելի կրնային ըլլալ յաչս իրենց ժամանակակցաց, և սակայն ստանալով մեծ դիրք ընկերութեան մէջ՝ եղան զեղխ, անզգամ, անգութ և հայհոյիչ, այսինքն՝ թողուցին իրենց ետև չար յիշատակ մը այն զօրութեան կամ իշխանութեան պատճառաւ զոր ստացան։ Զօրութեան հակամիտութիւնն է միշտ յերկնաւոր հանել մարդոց յոռեգոյն յատկութիւնները։

Ահաւասիկ հզօրագոյն անձը որ երբեք ապրեցաւ երկրի վրայ, որ կարող էր հրաշք գործել դպչելով, կամ առանց խօսելու, լոկ կամենալով, զոր մահը չկրցաւ բռնել, և որում, եթէ դիմադրէր նա, Պիղատոս այնչափ անկարող էր յաղթել որչափ անկարող էր իւր մատամբք վերցունել զկիրեանն։ Ահա այս անձը, որ թէպէտ այնքան հզօր է և կ'ըսէ թէ Տէր է աշխարհի, չունի երբեք նախանձ, ոխ, կամ ատելութիւն. չունի երբեք անձնասիրութիւն, ագահութիւն, փառամոլութիւն, այլ՝ լի է սուրբ և երկնային սիրով և նման երկնից կը փայլի իւր մաքրութեամբ։

Ահաւասիկ Տէրը զոր պարտիք պատկերա-

ցունել ձեր մտաց առջև օգնութեամբ այն բազմաթիւ ծանօթութեանց, որք Աւետարանաց մէջ տրուած են իւր նկարագրին նկատմամբ, պատկերացունել, այո, որպէս զի սիրէք զնա։

Նմանապէս կը յիշէք հարկաւ անոր զարմանալի համակրութիւնն առ աղքատս և առ կարօտեալս, առ այնպիսիս որ կարօտ էին իւր օգնութեան։ Եթէ դուք և ես ըլլայինք յայնժամ յաջող և զարգացեալ մարդիկ և բնակէինք, զոր օրինակ, ի Հռոմ, կամ յԱթէնս, և երթայինք ի Պաղեստին, նախ զո՞վ պիտի ուզէինք տեսնել։ Անտարակոյս պիտի ուզէինք տեսնել յաջող և քաջ դաստիարակեալ մարդիկը, այսինքն՝ զայնպիսիս որ պիտի հիւրընկալէին զմեզ սիրով և հաճելի պիտի գործէին մեր այցելութիւն հոն, և զայնպիսիս որոց կրնայինք ի փոխարէն մատուցանել նոյնպիսի պատիւներ երբ դային առ մեզ։ Պիտի ընտրէինք աղնուականները և երևելիները, եթէ պատեհութիւն ունենայինք և յաջողէինք բարեկամանալ անոնց։ Կարծեմ թէ անկարելի պիտի չըլլայինք տառապելոց, եթէ տեսնէինք զանոնք. սակայն պիտի ընտրէինք գլխաւորապէս միւս մարդիկը։ Վստահ եմ թէ ինձ համակարծիք է, Արդ, ահա Ոմն որ պատգամ ունի յերկնից և եկաւ յաշխարհ։ Որո՞ց եկաւ։ Եկաւ աղքատացոյն, վատթարագոյն և ամենատգէտ

անձանց։ Եկաւ տգէտներուն որպէս զի ուսուցանէ անոնց, մոլիներուն՝ որպէս զի յուղղութիւն բերէ և մաքրէ զանոնք։ Եկաւ գարշելի, տոկալի բորոտներուն որպէս զի սրբէ զանոնք։ Եկաւ անյոյս և վայրագ խելագարներուն որպէս զի պարգևէ անոնց խելք և բերէ զանոնք յաղատութիւն որդւոյ Աստուծոյ։ Այս էր անոր յորդառատ համակրութիւնը, և մենք պարտական ենք միշտ յիշել զայս երբ կը խորհինք Քրիստոսի վրայ։ Դարձեալ յիշեմ Քրիստոսի յատկութիւնները. զօրութիւն և ամենիշխանութիւն, քաղցրութիւն և հեզութիւն, համակրութիւն առ կարօտեալս, և կատարեալ մաքրութիւն հոգւոյ և կենաց։

Ապա դիտեցէք, մանաւանդ, անոր սէրն առ տղայս։ Զայս անշուշտ պէտք է յիշել որպէս զի ազդէ ի մեզ նոր սէր։ Մարդիկ յանժամ խիստ և գոռոզ էին հանդէպ փոքրիկ մանկան։ Անփոյթ էին անոր նկատմամբ, մինչև մեծնալով ըլլար վերջապէս քաղաքացի կամ մայր քաղաքացեաց։ Մանկիկն իբրև մանկիկ ոչինչ էր յաչս ընկերութեան։ Կիկերոն, պերճախօս ատենաբան և մեծ փիլիսոփայ և մարդասէր, կ'ըսէ թէ երբ մանուկ մը մեռնէր, ոչ ոք կը համարէր զայդ մասնաւոր խորհրդոյ արժանի, ոչ ոք կուտար այնմ կարևորութիւն։ Վարդապետն եկաւ այս աստուածային զօրութեամբ և գերիշխանութեամբ, և անդստին իսկզբանէ սիրեց զտղայս։ Ինքն իսկ մանուկ եղաւ ի Բեթ-

393353-67

Библиотека Ереванского Университета им. А. Мясникяна

լեհէմ և միշտ կը յիշէր զայս, որդի՝ ի Նա-
զարէթ, և որդիական հոգին մնաց իւր բո-
վանդակ կենաց մէջ։ Կը յիշէք թէ Նա առաւ
փոքրիկ մանուկներն ի գիրկս իւր, և դնելով
իւր ձեռքերն անոնց վրայ՝ օրհնեց զանոնք, ը-
սելով, «Թող տուէք ատ մանր տղոցը որ ինծի
գան, և մի արգիլէք ատոնք, ինչու որ Աս-
տուծոյ թագաւորութիւնը ատանկներունն է։»
Կը յիշէք թէ ըսաւ Նա, «Անոնց հրեշտակները
միշտ կը տեսնեն իմ Հօրս երեսը՝ որ երկինքն
է.» և առնլով փոքրիկ տղայ մը կանգնեցուց
վիճող աշակերտաց մէջտեղ և ըսաւ, «Թէ որ
դարձի չգաք և տղոց պէս չըլլաք, երկնից թա-
գաւորութիւնը պիտի չմտնէք։» Կը յիշէք
թէ բժշկեց զտղայս կրկին և կրկին, զոր օրի-
նակ՝ դուստրն Փիւնիկ Ասորի, հեթանոս, Յոյն
կնոջ, որ իրաւունք չունէր դիմել առ Քրիստոս,
ինչպէս Հրեայ մայրեր ունէին կը կարծուէր,
բայց որոյ աղօթքը լսելով չնորհեց Նա օրհ-
նութիւնը զոր կինն այնքան եռանդեամբ կը
խնդրէր ի Նպաստ իւր փոքրիկ աղջկան։ Քրիս-
տոսի սէրն առ տղայս յայտնի և անոյշ է ա-
նոր կենաց բոլոր պատմութեանց մէջ, ինչպէս
կ'ակնկալէինք, գիտնալով անոր աղնութիւնն
և մաքրութիւնը. վասն զի ուր այս յատկու-
թիւնք կան, անդ կայ գորով և սէր առ տղայս։

Դարձեալ, մի մոռնաք զոր ինչ Նա պարգևեց
աշխարհի։ Կը պարծինք մենք Ցննդեան տօնի
ընծաներով, և կ'ընդունիմ թէ գեղեցիկ և

բերկառիթ են այն ընծայք։ Զմոռնանք թէ
Քրիստոս տուաւ իբրև Ցննդեան ընծայ եր-
ջանկագոյն և սիրելագոյն Քրիստոնեայ աշխարհ-
մը։ Զկայ որ և իցէ բարեսիրական գործ, ե-
կեղեցի, կրթական հաստատութիւն, գրա-
տուն, և մարդկութեան օգտակար որ և իցէ
կազմակերպութիւն որ չգար Քրիստոսէ։ Կ'ը-
սէ՞ք արդեօք թէ «Քրիստոս երբեք տուած
չէ ինձ որևիցէ բան։» Ո՛հ, Նա տուած է
ձեզ ամէն ընծայ զոր առած էք ցարդ Ցննդեան
տօնին առթիւ։ Նա տուաւ ձեզ ամէն աղ-
դեցութիւն զոր կը վայելէք ընտանեկան եր-
ջանիկ յարկին տակ։ Նա տուաւ ձեզ ապա-
հովութիւնն և հանգստութիւնը զոր կը վա-
յելէք ընկերութեան մէջ։ Նա տուաւ ձեզ
այն գրականութիւնը որ յանչափս սիրելի է
ձեզ։ Նա տուաւ ամէն բան։ Իր Աւետարանն
է ամէն արարածի համար. ամէն աղդեցու-
թիւն որ կայ մեր շուրջ և ամէն կազմակեր-
պութիւն որ իւր գոյութեամբ կը գեղեցկացու-
նէ զերկիր, Քրիստոսէ կուգայ առ մեզ։ Այս
ամենայն է անոր Ցննդեան ընծան առ մեզ.
և եթէ այժմ բանալով զերկինս՝ աստուածա-
յին ձեռքը տեղացուներ մեր վրայ ոսկի և
արծաթ և պատուական քարեր, այդ պար-
գևք պիտի չըլլային այնքան ճոխ և տևական
որքան այս պարգևները զորս Նա կը շնորհէ։

Եւ դարձեալ, յիշեցէք թէ Նա կը խորհի
մենէ իւրաքանչիւրին վրայ։ «Զիս սիրեց, ու

իր անձը ինծի համար մատնեց։" կ'ըսէ մեծ առաքեալը։ Թերևս ըսէք ինձ, "Դու մանուկ եմ, փոքրիկ մանչ կամ աղջիկ. չեմ նման մեծ առաքելոյն. Քրիստոս չխորհիր իմ վրա։" Կը խորհի. ամէն անձի վրայ, որ կ'երթայ առ նա և որ աւելի և և'ս աւելի կը ջանայ սիրել զնա, կը խորհի նա սիրով և անդադար. և բաղմութիւնք փոքրիկ տղայոց զգացած են զայս, երբ իրենց սրտին մէջ մուտ գտած է սա խորհուրդը, "Քրիստոս կը սիրէ՞ զիս։" Քանի մը տարի յառաջ մեռաւ փոքրիկ աղջիկ մը, զոր ամէն ոք մեր տան մէջ կաթոգին կը սիրէր, և Թերևս մեծագոյն քաղցրութիւնն այն է զոր կը զգայինք և տակաւին կը զգանք՝ յիշելով թէ նա ի՛նչպէս, նստելով դաշնակին առջև, կը շարժէր իւր մատներն ստեղնաշարին վրայ և իւր սուր և բարձր ձայնով կ'երգէր, "'Իսուս կը սիրէ՞ զիս, 'Իսուս կը սիրէ՞ զիս։" Չէր կրնար ըսել "Յիսուս։" Արդ, սիրելիներս, այդ եղած է բաղում մանկական սիրտերու ճշմարիտ զգացումը և համոզումը, և պարտի ըլլալ նաև ձեր զգացումը և հաւատքը։

Ապա ուրեմն, երկար չխօսիմ այս մանրամասնութեանց վրայ. յիշեցէք Քրիստոսի նախ զօրութիւնը, գերիշխանութիւնը, ապա համակրութիւնն առ աղքատս, ապա գորովն առ տղայս, ապա ընծաները զորս տուած է

աշխարհի, ապա իւր սէրն առ ձեզ, և նայեցէք թէ ձեր սիրտը ևս պիտի չցու

՛ վսեմ, կաթոգին և անմահական սիրով առ Քրիստոս։ Յիշեցէք զայս ևս թէ սէր առ Քրիստոս և սէր առ Աստուած ի ձեռն Քրիստոսի՝ գաղտնիքն է երկնից։ Երկնային ծնունդ, երկնային գեղեցկութիւն է աշխարհի վրայ և աշխարհի մէջ։ Բանալին է որով երկինք կը բացուի մեզ յայնկոյս գերեզմանին։ Այո, փորձառութիւն մ'է որ կը տեսէ յաւիտեանս յաւիտենից։ Ոմն կու տայ ձեզ ծաղիկ մը։ Սիրուն է այն, բայց կը թառամի յետ սակաւուց, և կը պարտաւորիք նետել զայն։ Ոմն կու տայ ձեզ գիրք մը, բայց կը մաշի և կ'աղտոտի յետ սակաւուց, և կը պարտաւորիք դնել զայն անկիւն մը։ Այլ ոմն օր մը կու տայ ձեզ ադամանդ մը, թերևս փայլուն յակինթ մը կամ թանկագին արևակն մը, այդ ադամանդը, յակինթը կամ պատուական քարը երբեք չկորուսաներ իւր փայլը։ Տարէք զայն ուրիշ երկիրներ, և բացէք տուփը, և ահա պիտի գտնէք անոր փայլն այնպէս պայծառ և գեղեցիկ որպէս յառաջագոյն։ Թաղեցէք զայն գետնին տակ եթէ կամիք, և յետ ժամանակաց փորելով գետինը՝ դուրս հանեցէք զայն, և ահա պիտի տեսնէք թէ ո՛չ փայլն է նուազած, ո՛չ գեղեցկութիւնը նսեմացած։ Այդպէս է Քրիստոսի այս սէրն հաւատացելոյն սրտին մէջ։ Շատ

բաներ ունիք թերևս որք կարևոր և գեղեցիկ կը թուին ձեզ այժմ, բայց պիտի մոռնաք։ Սակայն երբ այս սէրը միանգամ մտնէ ձեր սրտին մէջ, հոն կը մնայ յաւիտեան իւր գեղեցկութեամբ և ջերմութեամբ, և հետզհետէ կ'ըլայ աւելի գեղեցիկ և աւելի ջերմ մինչև կ'ըլայ վերջապէս անմահական ստացուած, անմահական ուրախութիւն։

«Ան որ դուք չտեսած՝ կը սիրէք։» երանի՛ թէ այսպէս կարելի ըլայ ըսուիլ ամենուս համար, մեծ թէ փոքր, և երանի՛ թէ տեսնենք զնա երկնից մէջ և սիրենք յաւիտեանս։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
Армянской ССР

«Ազգային գրադարան»
NL0028568

1875

1818